



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԸ**

Երեքշաբթի, 27 Յունուարի Երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամները, գլխավորութեամբ վարչութեան ատենապետ Տիար Սթիւ Արթինեանի: Պատուիրակութիւնը Ազգ. Առաջնորդարան եկած էր Առաջնորդ Սրբազանը շնորհաւորելու ամանորի ու Ս. Ծննդեան տօներուն առիթով, նաեւ տեղկութիւններ տալու իրենց յառաջիկայ ծրագիրներուն ու ձեռնարկներուն մասին: Առաջնորդ Սրբազանին կողքին, հանդիպումին ներկայ եղան Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան եւ անդամներ՝ Տեարք Վահէ Յովակիմեան, Խաչիկ Երեցեան, եւ Կարօ Էշկիեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանին ներկայացուցին սկաուտական ու դաստիարակչական ծրագիրներ, որոնք կը փափաքին իրականացնել Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող Երիտասարդական միութեանց հետ գործակցաբար: Առաջնորդ Սրբազանը ողջունեց այս ծրագիրը, նկատել տալով, որ Վեհափառ Հայրապետը 2009 տարին հռչակած է Երիտասարդութեան Տարի, հետեւաբար, զոյգ միաւորներուն առաջադրանքները կը համապատասխանեն իրարու: Այս իմաստով, տարուան առաջին նախաձեռնութիւնը պիտի ըլլայ Տեառնընդառաջի նախատօնակին տեղի ունեցող աւանդական հանդիպումը՝ Առաջնորդ Սրբազանին կողմէ սկաուտական կազմին հիւրընկալումը Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկին տակ, 13 Փետրուարի Երեկոյեան: Գործակցութեան այլ դաշտ մըն է «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանի դասախօսական ծրագիրը:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.Ի ու անոր ծառայողներուն սերնդակերտ աշխատանքը, միաժամանակ վեր առնելով Երիտասարդութեան Տարուան առիթով յատուկ գործակցութիւն ստեղծելու պատրաստակամութիւնը: Ան նաեւ ողջունելի նկատեց նաեւ մեր միութիւններուն միջեւ հասարակաց կալուածներու մէջ գործակցութեան բացումն ու զարգացումը, որմէ կրնան օգուտ քաղել բոլորը:

Հանդիպումը վերջ գտաւ սերտ գործակցութիւնը նոյն թափով շարունակելու յանձնառութեամբ:

## **HOMENETMEN REGIONAL EXECUTIVE VISITS THE PRELACY**

On the evening of Tuesday, January 27<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy a delegation from Homenetmen Regional Executive, headed by Chairman Mr. Steve Artinian. The members had to come to convey their New Year and Christmas well wishes to the Prelate as to well to discuss the recent and upcoming activities they have planned.

The guests expressed their wish for collaboration with the Prelacy youth committee, which the Prelate welcomed, especially considering that H.H. Catholicos Aram I has declared 2009 the "Year of the Youth". The first collaborative event of the year will take place on the Eve of the Feast of the Presentation of our Lord to the Temple, a service in which the scouts and youth traditionally participate. Also discussed was the "St. Mesrob Mashdots" Medal religious program.

The Prelate commended the valuable service of the members and above all their initiative to create opportunities to commemorate the "Year of the Youth".